



«ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՆԱԽԱԶՆԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

### **Ֆինանսավորվող ենթածրագրերը և դրանց բաղադրիչների տեսականին**

Այս Բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորվում են տարածքային կայուն զարգացմանն ուղղված միջնաժամկետ (1-3 տարի) ենթածրագրեր, որոնք կբարելավեն շահառուների կենսապայմանները, հանրային ծառայությունների մատուցումը, կզարգացնեն սոցիալական կապիտալը և ինստիտուցիոնալ ներուժը և կընդլայնեն բնակչության եկամուտներ ստանալու հնարավորությունները:

Ֆինանսավորվող ենթածրագրերը կարող են ունենալ բաղադրյալ կառուցվածք և ներառել տարբեր աղբյուրներից ֆինանսավորվող մի քանի բաղադրիչ, ներառյալ մասնավոր ներդրումները: Մեկ ակի, իրար լրացնեն և ուժեղացնեն, լինեն կայուն ու կենսունակ:

Ենթածրագրի բաղադրիչների տեսականին հետևյալն է.

#### **Սոցիալական ենթակառուցվածք և հարակից ապրանքներ՝**

մանկապարտեզների, տարրական և միջնակարգ դպրոցների, արվեստի ու երաժշտական դպրոցների, մարզական համալիրների, համայնքի հասարակական կենտրոնների (ներառյալ գրադարաններ, թանգարաններ, համայնքային դահլիճներ, ակումբներ և այլն), առողջապահական կենտրոնների (այդ թվում՝ կլինիկաների, պոլիկլինիկաների), համայնքային ծառայությունների համալիր կենտրոնների կառուցում, խմելու ջրի համակարգերի վերանորոգում, վերակառուցում և կահավորում:

#### **Տնտեսական ենթակառուցվածք՝**

- բ. ոռոգման համակարգերի, ներառյալ ջրամբարների, վերանորոգում, վերակառուցում և կառուցում, որոնք կապված չեն միջազգային ջրային համակարգերի հետ,
- գ. տրանսպորտային համակարգի զարգացում,
- դ. շուկայատեղերի կամ տնտեսական և գյուղատնտեսական արժեքային շղթաներին նպաստող այլ հասարակական ենթակառուցվածքի կազմակերպում,
- ե. դեպի մեկուսացված գյուղերը, գյուղատնտեսական հողերը և ֆերմաները տանող օժանդակ ճանապարհների վերականգնում (ներառյալ կամուրջներ, ցամաքուրդային համակարգեր, ջրատարներ, հենապատեր և այլն),
- զ. արտադրական նպատակների համար օգտագործվելիք տարածքների կազմակերպում, ենթակառուցվածքի զարգացում:

**Սանիտարական, շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածք և էներգայի կիրառություն`**

- ա. կոյուղու ցանցերի (պայմանով, որ դրանք միացած լինեն կոյուղու հիմնական համակարգին կամ ունենան ֆիլտրման ներքին ավազան) և հեղեղատարների վերանորոգում, վերակառուցում և կառուցում,
- բ. Վնասված բնապահպանական կամ տուրիստական գրավչության վայրերի բարեկարգում կամ վերականգնում` ծառատունկերի, լանդշաֆտի ձևավորման, և/կամ աղբի հավաքման և տեղափոխության միջոցով,
- գ. աղբի և թափոնների կառավարում,
- դ. այլընտրանքային էներգիայի օգտագործման և էներգախնայողության հետ կապված գործունեություն,
- ե. հանգստի գոտիների կառուցում, վերականգնում և վերակառուցում:

**Տեղական նշանակության բիզնես ծրագրեր`**

- ա. գյուղմթերքի պահպանում և վերամշակում
- բ. նոր տեխնոլոգիաների վրա հիմնված այգիներ, տնկարաններ, ջերմոցներ և այլն,
- գ. կաթի հավաքման կետեր և վերամշակման արտադրամասեր,
- դ. Այլ

**Տարածաշրջանային աշխատանքային շուկաների զարգացում`**

- ա. մասնագիտական և այլ վերապատրաստման ծառայություններ/միջոցներ, հմտությունների զարգացման և համանման կենտրոններ, որոնք նպաստում են տարածաշրջանային աշխատանքի շուկայում պահանջարկի և առաջարկի համապատասխանեցմանը,
- բ. Բիզնես-ինկուբատորներ,
- գ. այլ:

**ՀՏՁՀ-ի սեփական միջոցները չեն կարող օգտագործվել ուղղակի ֆինանսավորման համար`**

- մասնավոր բիզնես գործունեության, օրինակ` սեփականության ձեռքբերում, կառուցում և հանձնում անհատ ձեռներեցներին և բիզնեսներին,
- համայնքապետարանի համար ապրանքների ձեռքբերում, վարչական շենքերի կառուցում, վերակառուցում և վերանորոգում: